## ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍՍԱՐԱԲԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ

### 1914—15 ՈՒՍ. Տ. ՀԱՇԻՒԸ.

Նոր-Նախիջեւանի և Բեսսարաբիոյ Թեմական Հոգևոր Դպրանոցի Հոգաբարձութիւնը, իւր կանոնադրութեան 17-րդ յօդուածի իա. պարբերութեան համաձայն, պարտք է համարում՝ ընդհանուրի գիտութեան համար՝ տպագրութեամբ հրատարակել իւր խնամքին յանձնուած Թեմական Դպրանոցի անցեալ 1914-15 ուս. տարեշրջանի համառօտ հաշիւը։

1914—15 ուս. տարուայ սկզբում Դպրանոցիս երեք նախակրթարանների և վեց դասարանների աշակերտների ընդհանուր թիւն է 275. տարուայ մէջ և վերջը յօժարակամ դուրս են եկել 22 հոգի և տարեվերջը մնացել է 253 աշակերտ։ Դոցանից փոխադրուել են յաջորդ դասարանները ու աւարտել են Դպրանոցիս լիակատար դասընթացքը 178 հոգի, մնացել են դասարաններում 69 և մանկավարժական ժողովի որոշմամբ արձակուել են 6 հոգի։

Դպրանոցիս լիակատար դասընթացքն աւարտել են 10 հոգի, որոնցից 4-ը Ն.-Նախիջեւանցիք են, 3-ը Թօփտեցի, 1-ը Ս. Խաչ վանքի ագարակցի, 1-ը Նիամիթացի և 1-ը Բաղուեցի։

Հաշուական տարում աշակերտների ընդհանուր թուից 44 հոգին գիշերօթիկներ են, իսկ 231-ը երթևեկներ։

Ըստ դասակարգի և բնակութեան ու ծննդեան տեղի Դպրանոցիս աշակերտները բաժանուել են՝

| | |
|---|---|
| Նոր-Նախիջեւանի մեշչանների որդիք . . | 121 |
| Հոգևորականների որդիք . . . . . | 10 |
| Տոհմական քաղաքացիների որդիք . . | 3 |
| Նոր-Նախիջեւանի գիւղացիների որդիք . . | 71 |
| Օտարաբնակների որդիք . . . . . | 70 |

Երթևեկ աշակերտների համար սահմանուած է երկու կարգի թոշակ։ Առաջին կարգին պատկանողները վճարում են 50 ռուբլի, իսկ երկրորդ կարգին պատկանողները—30 ռուբլի։

Երթևեկների ընդհանուր թուից(231 աշակ.)

| | | |
|---|---|---|
| ա) Առաջին կարգի թոշակատու են . . | 20 | հոգի |
| Երկրորդ կարգի թոշակատու են . . | 44 | » |
| | 64 | » |
| բ) Առաջին կարգի սաներ են . . . | 53 | հոգի |
| Երկրորդ կարգի սաներ են . . . | 31 | » |
| | 84 | հոգի |
| գ) Ձրիավարժ են . . . . . . | 83 | հոգի |

Առաջին կարգի սաներ պահել են՝

ա) Նոր-Նախիջևանի Եկեղեցական Հոգաբարձութիւնը—
32 սան Գասպար Պօպովեանի անուան
2 սան Մինաս Բէյլէ Շահինեանի անուան
1 սան Խաչատուր ա. բ. Զարիֆեանի անուան
1 սան Յովսէփ Ալաջալեանի անուան
2 սան Լոյսպարոն Բաթրեանի անուան
1 սան Գէորգ Կարապետեանի անուան

բ) Ռոստով-Նախիջ. Փոխ. Վարկի ընկերութիւնը—
10 սան նոյն Ընկերութեան անունով։

գ) Նոր-Նախիջևանի քաղաք. Վարչութիւնը—
4 սան Տ. Խաչատուր ա. բ. Զարիֆեանի անուան։

Երկրորդ կարգի սաներ պահել են՝

ա) Նոր-Նախիջ. Եկեղց. Հոգաբարձութիւնը—
2 սան Մկրտիչ Մուրատխանեանի անուան։
2 սան Գրիգոր Խազիզեանի անուան։
1 սան Միքայէլ Թուսուզեանի անուան։

բ) Նոր-Նախիջ. Բարեգործ. Ընկերութիւնը—*)

23 սան ազգային վաստակաւորների անուան։

գ) Թեմ. Դպրանոցիս հաշուով (Նուիրաբերուած դրամ)

2 սան բժ. Գէորգ Տիգրանեանի անուան

1 սան Մինաս Բալաբանեանի անուան։

Գիշերօթիկների համար սահմանուած է տարեկան 350 ռ. թոշակ։ Հոգեւորականների որդիքը և հարազատ եղբայրները համարւում են արտօնեալ թոշակառուներ և վճարում են՝ առաջինները—250 ռ., վերջինները—300 ռուբլի տարեկան։

Գիշերօթիկների ընդհանուր թուից (44 աշակ.)

| | | |
|---|---|---|
| Լիաթոշակ են | . . . . | 6 հոգի |
| Արտօնեալ են | . . . . | 5 հոգի |
| Սաներ են | . . . . | 33 հոգի |

Գիշերօթիկ սաներ պահել են՝

ա) Թեմ. Դպրանոցը (կտակաւանդուած դրամագլ. հաշուով)

11 սան Խաչերես Դիլանչքովի անուան

1 սան Սրբազան Առաջնորդի »

1 սան Բարեգ. Ընկ. հաշուին՝ Ռ. Պատկանեանի անուան

բ) Եկեղեցակ. Հոգաբարձութիւնը—

5 սան Վարդերես Ախչիեանի անուան

2 սան Գասպար Պօպովեանի անուան

2 սան Նախկին Մարգաս. Ընկ. անուան

1 սան Միքայէլ Նալբանդեանի անուան

1 սան Լուսաբեր Խալիբեանի անուան

Կազմեց՝ Դպրանոցի Տեսուչ՝

Ե. Շահ-Ազիզ.

---

*) 1914—15 ուս. տարուայ երկրորդ կիսամեակից, միջոցների պակասութեան պատճառով, սաների պահպանութիւնը կարճուած է։